



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

02.02.2018թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**  
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/06**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ)՝ քննելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 16.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/06 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

**1. «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.01.2018թ. խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ձավարեղենի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել՝ «Սիսականի Հասկ» ՍՊԸ-ն, «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, «Մարմարա Գոլդ» ՍՊԸ-ն, «Մարկետ» ՍՊԸ-ն, «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն, Հրայր Մանուկյան Ա/Ձ-ն, «Ավանգարդ» ՍՊԸ-ն և «Արմեն-Համիկ» ՀՁ ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 5-րդ և 6-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն:

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն գնային առաջարկ է ներկայացրել 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով, համապատասխանաբար 51 687 168 ՀՀ դրամ, 32 928 900 ՀՀ դրամ և 23 710 254 ՀՀ դրամ, ընդամենը՝ 108 326 322 ՀՀ դրամի: Վերջինս հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է 14.12.2017թ. N 7637-02 բանկային երաշխիքը, որի գումարը կազմում է 15 000 000 ՀՀ դրամ:

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիք, սակայն հրավերով պահանջվում է ներկայացնել միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 108 326 322 ՀՀ դրամ, որի 5 տոկոսը պետք է լինի 5 416 316.1 ՀՀ դրամ, սակայն վերջինս ներկայացնելով հայտի ապահովում բանկային երաշխիքի ձևով, որպես հայտի ապահովման գումար նշել է 15 000 000 ՀՀ դրամ, որի չափը ոչ թե հավասար է, այլ գերազանցում է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

*Ընկերությունը ներկայացված բողոքով խորհրդին խնդրել է՝*

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագրեր կնքելու գործընթացը:

2. Չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձավարեղենի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Հ.Ա.Ն.Ս -ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 5-րդ և 6-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Ընկերության կողմից որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ նշվել է հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն (այսուհետ նաև՝ Կարգ)՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 10:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

**2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/325 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն, վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.01.2018թ. կայացրած որոշման հիման վրա 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը տուժանքի մասին հայտարարության փոխարեն ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, որի գումարը գերազանցել է մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի 5%-ը, հետևաբար հայտը ենթակա չէ մերժման:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 10:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2018/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2018/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ձավարեղենի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն:

2. «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններով, համապատասխանաբար՝ 51 687 168 ՀՀ դրամ, 32 928 900 ՀՀ դրամ և 23 710 254 ՀՀ դրամ, որի ընդհանուր գինը կազմել է՝ 108 326 322 ՀՀ դրամ:

3. Ընկերությունը ներկայացրել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, որի չափը կազմում է 15 000 000 ՀՀ դրամ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով արձանագրել է, որ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը՝ տուժանքի մասին հայտարարության փոխարեն, ներկայացրել է բանկային երաշխիքի տեսքով և գումարը գերազանցում է առաջարկված գնային առաջարկի 5 տոկոսը, որը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է ընդունելի:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

#### **4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի 16.01.2018թ. բողոքը և ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/325 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«*պաշտպանության նախարարության կարիքների համար «Ձավարեղենի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:*

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում***

**բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:**

«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, 4-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, համապատասխանաբար՝ 51 687 168 ՀՀ դրամ, 32 928 900 ՀՀ դրամ և 23 710 254 ՀՀ դրամ, որի ընդհանուր գինը կազմել է՝ 108 326 322 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ Ընկերության կողմից ներկայացվել է հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, որի չափը կազմում է 15 000 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 15.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով արձանագրել է, որ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը՝ տուժանքի մասին հայտարարության փոխարեն, ներկայացրել է բանկային երաշխիքի տեսքով և գումարը գերազանցում է առաջարկված գնային առաջարկի 5 տոկոսը, որը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է ընդունելի:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

**Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին:**

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ. կետի 7.1-րդ ենթակետի համաձայն՝ **Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:**

Այսպիսով, վերոգրյալ իրավական հիմնավորումներից ելնելով, Խորհուրդն արձանագրում է, որ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման չափը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը, քանի որ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի հինգ տոկոսը կազմում է **5 416 316.1 ՀՀ դրամ**, այլ ոչ **15 000 000 ՀՀ դրամ**, ուստի նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի

պահանջներին, քանի որ չի բավարարում գնային առաջարկի հինգ տոկոսի չափով ներկայացված լինելու պահանջին:

Միաժամանակ խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետով սահմանվել է, որ հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, մինչդեռ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացվել է բանկային երաշխիքի ձևով, ուստի նման պայմաններում խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից խախտվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1-րդ ենթակետով սահմանված պահանջը:

**Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ *հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Այսպիսով, խորհուրդը գտնում է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ ենթակա էր մերժման հայտերի բացման նիստում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 16.01.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝

Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ձավարեղենի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու 15.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Հ.Ա.Ն.Ս -ՖՈՒԴ» ՍՊԸ-ին 5-



րդ և 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

«Ձ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

«Ձ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

«Ձ գնումների բողոքարկման  
խորհրդի անդամ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ